

է: Մի՛ երկնչիցիս, այլ զուարթ մտօք զարթիցես ի տէր Աստուած քո գառնալ առ նա, զի եւ նա գարձցի ի քեզ ի լոյս երեսաց գթութեան փրկել ի բանտէդ յարգիլմանէ, զի փառաւորեսցի ի գործս ողորմութեան իւրոյ, որ միշտ օրհնի յարարածոց իւրոց ի սկզբանէ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս: [1690]

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 23ա-25ա)

(ՅԵՐԵՄԻԱՅԷ առ Նահապետ Կարողիկոս վասն գալստեան որդւոյն իւրոյ Գրիգորիս վարդապետի, գրեալ ի ԹԷՔՔՈՒՐՏԱՂԷ)

Յիսուսահիմն եւ քրիստոսակառոյց սրբոյ մենաստանիդ մեծի զբաղձանս հոգւոց արդեանց արտայայտելով ի ձեռն նոմօսի, մտանելով ի յարկս նորա եւ երկրպագելով ի տեղւոջ ուր կացան սոք նորա սքանչելի, այսինքն ի տեղի իջման Բանին միածնի, որ ի սկզբանէն Աստուած էր եւ առ Աստուած էր, Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, որ ամենայն ինչ նովաւ եղեւ յերկինս եւ որ ինչ յերկրի. նոյն յետ մարդեղութեան աստուածայինն հրաշօք յայդր տեսեալ հոգւոց մերոց լուսատուի: Ուր նարդենիս ի սուրբ գլխում տաճարիդ կանգնեալ յաշտանակի՛ տարածմամբ գլոյս շնորհաց, ի նոյնում լուսոյ ճառագայթեցեալ սխրալի, եւ շառաւիղ եւ փոխանորդիդ Լուսաւորչին տեղապահի՛ Տեառն Նահապետ աստուածարեալ ամենից Հայոց կաթողիկոսի սրբազան եւ շնորհաբաշխ անջիդ համբոյրս ընծայապէս մատուցի. որ ի ձեռն քոյդ նպատակի Տեառն Յիսուսի եւ ի ձեռն սրբոյն Գրիգորի